

**“ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԱԿՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ” ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. “Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ” ՊՈԱԿ-ի ֆակուլտետը՝ որպես ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում, իրականացնում է բարձրագույն կրթական ծրագրեր մեկ կամ հարակից մի քանի ուղղությունների /մասնագիտությունների/ զծով, ինչպես նաև գիտական հետազոտություններ է կատարում գիտության համապատասխան ոլորտներում: Հիմնվելով ՀՀ “Կրթության մասին” օրենքի, ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետև՝ ինստիտուտ) կանոնադրության վրա՝ ֆակուլտետը կրթական ծրագրեր է իրագործում օրենսդրությամբ նախատեսված տարբեր ձևերով ու հիմունքներով, այդ թվում՝ վճարովի:

1.2. Ֆակուլտետն ստեղծվում է ինստիտուտի խորհրդի որոշման հիման վրա՝ հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

- առկա է 200-ից ոչ պակաս ուսանող՝ առնվազն երկու մասնագիտությամբ.
- կան ամբիոններ, որոնք ապահովում են տվյալ մասնագիտության հիմնարար և նեղմասնագիտական գիտակարգերը.
- գործում են գիտական կոլեկտիվներ, որոնք հիմնարար գիտական հետազոտություններ են իրականացնում տվյալ մասնագիտությանն առնչվող բնագավառներում.
- ապահովված են կրթության համար անհրաժեշտ շենքային ու նյութատեխնիկական բազան, գիտական և մեթոդաբանական հիմքերը, ուսումնական ու արտադրական պրակտիկաների պայմանները.
- հիմնավորված է տվյալ մասնագետների հասարակական պահանջարկը:

1.3. Ֆակուլտետի հիմնադրման համար անհրաժեշտ է ինստիտուտի խորհուրդ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը,

- ֆակուլտետի բացման անհրաժեշտության հիմնավորումը,
- ֆակուլտետի կառուցվածքը,
- հաստիքային ցուցակը,
- կրթական ծրագրերը,
- ամբիոնների, լաբորատորիաների և այլ կառույցների տեղաբաշխման մասին հիմնավորված առաջարկությունները:

1.4. Ֆակուլտետում դասավանդվող մասնագիտությունների կրթական պլաններն ու ծրագրերը պետք է հաստատված լինեն սահմանված կարգով:

1.5. Ֆակուլտետի կանոնակարգը և դեկանի ընտրության արարողակարգը հաստատվում է ինստիտուտի խորհրդում և գիտական խորհրդում:

2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հիմնվելով ինստիտուտի կանոնադրության և սույն կանոնակարգի վրա:

2.2. Ֆակուլտետի հիմնախնդիրներն են՝

- բավարարել ուսանողների պահանջմունքները ինտելեկտուալ, մշակութային և բարոյական զարգացման, բարձրագույն կրթության և համապատասխան որակավորման ձեռքբերման հարցերում,

- բավարարել բարձրագույն կրթությամբ բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի հանդեպ հասարակության պահանջմունքները,

- կազմակերպել և իրագործել հիմնարար ու կիրառական գիտական հետազոտություններ, այլ գիտատեխնիկական, փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքներ,

- իրականացնել գիտական և մանկավարժական փորձաքննություն,

- տարածել և հասարակայնացնել գիտական ըմբռնումները, իրականացնել մշակութային-լուսավորչական գործունեություն,

- այլ խնդիրներ, որոնք չեն հակասում ինստիտուտի կանոնադրությանը և համապատասխանում են ֆակուլտետի մասնագիտական թեքմանը:

2.3. Ֆակուլտետն ունի հետևյալ ստորաբաժանումները՝ ամբիոններ, ուսումնական և գիտական լաբորատորիաներ, ուսումնական կաբինետներ և այլն, որոնց ղեկավարները ենթարկվում են ֆակուլտետի ղեկանին:

Ֆակուլտետի հիմնական գիտակրթական ստորաբաժանումը ամբիոնն է, որն իրագործում է կրթական, դաստիարակչական, գիտահետազոտական և մեթոդական աշխատանքները, ինչպես նաև պատրաստում է գիտամանկավարժական կադրեր, բարձրացնում նրանց որակավորումը:

Ամբիոնի հիմնախնդիրներն են՝

- ուսուցման բոլոր ձևերում (առկա, հեռակա) դասախոսությունների, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների, մասնագետների որակավորման բարձրացման աշխատանքների անցկացում,

- ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպում, ուսանողների կուրսային և ինքնուրույն աշխատանքների կազմակերպում և ղեկավարում,

- կրթական ծրագրերի համաձայն նախատեսված ընթացիկ ու ամփոփիչ բոլոր ատեստացիաների /քննություններ, ստուգարքներ, ավարտական աշխատանքների պաշտպանություններ և այլն/ կազմակերպում,

- ամբիոնի ներկայացուցիչների միջոցով ավարտական աշխատանքների պաշտպանության և պետական քննությունների անցկացման կազմակերպում,

- դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական գրականության, ընդհանուր և հատուկ դասընթացների ուսումնական ծրագրերի, բոլոր տիպի ուսումնական հանձնարարությունների, ուսումնական պլանների՝ պետական չափորոշիչներին համապատասխան մշակում, այլ ամբիոնների կողմից կազմված ուսումնական ծրագրերի գրախոսում,

- գիտահետազոտական աշխատանքների բարձր որակի ապահովում,

- ամբիոնի աշխատակիցների կրթական, գիտական, մեթոդական և այլ աշխատանքների անհատական պլանների քննարկում,

- դասալսումների և դասախոսական տեքստերի քննարկում,

– ամբիոնի լավագույն դասախոսների աշխատանքային փորձի ուսումնասիրություն, ձեռքբերումների ընդհանրացում ու տարածում, օգնություն սկսնակ դասախոսներին մանկավարժական վարպետության հմտությունների յուրացման գործում,

– ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի (ուսումնական վարչության), դեկանի հանձնարարությամբ ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական գրականության, այլ ամբիոնների կողմից իրականացվող ուսումնական ծրագրերի մասին եզրակացության նախապատրաստում,

– ամբիոնի անդամների ուսումնական և մեթոդական անհատական աշխատանքների աշխատանքային պլանների քննարկում,

– ուսուցման մեջ նոր և բարձր տեխնոլոգիաների ներդրման պլանի մշակում և տարածում,

– ուսանողների առաջադիմության և մասնագետների պատրաստման որակի մշտական ուսումնասիրություն, վերլուծություն,

– ինստիտուտում և ֆակուլտետներում կազմակերպվող միջոցառումներին և լրացուցիչ ծառայություններին մասնակցություն,

– գիտակրթական և արտադրական ձեռնարկությունների ու հիմնարկների հետ կայուն և փոխշահավետ կապերի հաստատում,

– մասնագիտական գիտելիքների քարոզչության և լուսավորչական գործունեության ծավալում հասարակության մեջ,

– շրջանավարտների հետ կապի ապահովում:

2.4. Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը, որը մրցութային կարգով գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով ընտրվում է ինստիտուտի գիտական խորհրդում տվյալ ամբիոնի մասնագիտացումներին համապատասխան գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող հեղինակավոր և որակավորված մասնագետներից:

Ամբիոնի վարիչի պաշտոնը կարելի է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու հնգամյա ժամկետ անընդմեջ (սույն կարգը տարածվում է նաև նախկինում ընտրված կամ պաշտոնակալող անձանց վրա):

Ամբիոնի կազմի մեջ մտնում են պրոֆեսորներ, դոցենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ, ասիստենտներ, գիտական աշխատողներ, ուսումնաօժանդակ անձնակազմը:

Կադրային և գիտամանկավարժական հարցերով քվեարկության միջոցով որոշումների կայացմանը մասնակցում են ամբիոնի հաստիքային դասախոսներն ու գիտական աշխատողները:

2.5. Ամբիոնը կազմավորվում է առնվազն հինգ հաստիքի առկայության դեպքում. աշխատակիցներից առնվազն երեքը պետք է ունենան գիտական աստիճան և/կամ կոչում՝ հաստատված ՀՀ ԲՈՀ-ի կողմից:

2.6. Ֆակուլտետը կարող է առաջարկներ ներկայացնել ֆակուլտետի այլ ստորաբաժանումների ստեղծման վերաբերյալ, որոնք հաստատվում են ինստիտուտի խորհրդում և վավերացվում ռեկտորի հրամանով: Այդ ստորաբաժանումների իրավունքներն ու խնդիրները չպետք է դուրս գան սույն կանոնակարգի շրջանակներից:

2.7. Ֆակուլտետի կառուցվածքի փոփոխության վերաբերյալ որոշումները՝ կապված ամբիոնների ստեղծման կամ լուծարման, ամբիոնների անվանափոխության, մասնագիտացման փոփոխության հետ, հաստատվում են ինստիտուտի խորհրդի կողմից և վավերացվում ռեկտորի հրամանով:

3. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Ֆակուլտետի գլխավոր պաշտոնատար անձը ֆակուլտետի ղեկանն է, որը ղեկավարում է ֆակուլտետի գործունեությունը և լիակատար պատասխանատվություն է կրում ֆակուլտետի գործունեության համար:

3.2. Դեկանը գործում է ֆակուլտետի անունից՝ ինստիտուտի կանոնադրությամբ և սույն կոնոնակարգով սահմանված լիազորությունների շրջանակներում:

3.3. Դեկանն ընտրվում է ֆակուլտետի խորհրդի նիստում, մրցութային եղանակով, հինգ տարի ժամանակով, գաղտնի քվեարկությամբ այդ ֆակուլտետի գիտական աստիճան կամ կոչում ունեցող հեղինակավոր ու որակավորված մասնագետների շրջանից, որի հետ ինստիտուտի ռեկտորատի առաջարկությամբ 5 տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքում և պաշտոնում հրամանագրում ինստիտուտի ռեկտորը:

Դեկան կարող է ընտրվել այն անձը, որի տվյալները համապատասխանում են նշված պաշտոնի համար ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին, և որի տարիքը չի գերազանցում ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային տարիքը՝ անկախ աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակից: Ֆակուլտետի ղեկանի պաշտոնը կարելի է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու հնգամյա ժամկետ անընդմեջ:

Այն անձինք, ովքեր դադարում են համապատասխանել ղեկանին առաջադրվող պահանջներին, ազատվում են զբաղեցրած պաշտոնից:

3.4. Ֆակուլտետի խորհուրդը ընտրովի ներկայացուցչական մարմին է, որն իրականացնում է միայն ղեկանի ընտրությունը (նոր ձևավորվող ֆակուլտետի ղեկանի ընտրությունը կազմակերպվում է ինստիտուտի գիտխորհրդում): Ֆակուլտետի խորհուրդն ստեղծվում է ֆակուլտետի ղեկանի ընտրությունից մեկ ամիս առաջ՝ սույն կոնոնակարգին համապատասխան:

3.4.1. Ֆակուլտետի խորհրդի (այսուհետև՝ խորհրդի) կազմում ընդգրկվում են՝
ա) ի պաշտոնե՝

– ռեկտորը, որը նախագահում է խորհրդի նիստը,
– ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի անդամները (ղեկանի պաշտոնի համար մրցութին մասնակցող խորհրդի անդամի թեկնածությունը ժամանակավորապես կասեցվում է),

– ռեկտորի ներկայացմամբ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր(ներ):

բ) ընտրովի (համամասնորեն)՝

– ֆակուլտետի ամբիոնների և հետազոտական ստորաբաժանումների կողմից իրենց կազմից առաջադրված 0,5 և ավելի բարձր հաստիքաչափով ձևակերպված առաջատար դասախոսներ և հետազոտական ստորաբաժանումների գիտաշխատողներ,

– ֆակուլտետի ակադեմիական խմբերի առաջադեմ ուսանողներ,

– համաինստիտուտային ամբիոնների՝ տվյալ ֆակուլտետում 50%-ից ավելի բեռնվածությամբ առաջատար դասախոսներ:

3.4.2. Խորհրդի կազմում ի պաշտոնե նշանակված անդամների թիվը չպետք է գերազանցի ընդհանուր կազմի 50%-ը:

3.4.3. Խորհրդի կազմի մինչև 25%-ը ուսանողներ են (ներառյալ ֆակուլտետի ուսխորհրդի նախագահը):

3.4.4. Ֆակուլտետի խորհուրդը հաստատվում է ռեկտորի հրամանով: Խորհրդի ոչ ընտրովի անդամները գիտամեթոդական խորհրդի որոշման հիման վրա խորհրդի կազմի մեջ են մտնում ռեկտորի հրամանով:

3.4.5. Ֆակուլտետի խորհրդի նիստերի վերաբերյալ կազմվում են արձանագրություններ, որոնք ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

3.4.6. Խորհրդի անդամների ցուցակը կազմվում և քննարկվում է ֆակուլտետի դեկանատի նիստում, որին մասնակցում են նաև աշխատողների և ուսանողական արհեստակցական միությունների, ուսանողական խորհրդի ներկայացուցիչներ: Ցուցակը հաստատվում է ինստիտուտի ռեկտորի հրամանով:

3.4.7. Ֆակուլտետում համատեղության կարգով աշխատանքի ձևակերպված դասախոսները և գիտաշխատողները չեն ընդգրկվում խորհրդի կազմում:

3.5. Ֆակուլտետի դեկանը՝

– Անմիջականորեն ղեկավարում է ֆակուլտետում իրականացվող կրթական, գիտական ու դաստիարակչական աշխատանքները և վերահսկողություն է սահմանում դրանց կատարման ընթացքի հանդեպ:

– Ուսանողներին թույլատրում է մասնակցել քննությունների հանձնմանը և ավարտական դիպլոմային աշխատանքի պաշտպանությանը:

– Առաջարկություններ է ներկայացնում ուսանողների ընդունելության, վերականգնման և հեռացման, ինչպես նաև նրանց ակադեմիական արձակուրդի ձևակերպման մասին:

– Առաջարկություններ է ներկայացնում գոյություն ունեցող նորմատիվային ակտերի համաձայն ուսանողներին կրթաթոշակ նշանակելու և նպաստ տրամադրելու մասին:

– Վերահսկողություն է սահմանում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացի նկատմամբ:

– Իրականացնում է ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների առարկաների գծով դասագրքերի, ուսումնական և մեթոդական ձեռնարկների նախապատրաստման ընդհանուր ղեկավարումը:

– Կազմակերպում և անցկացնում է ամբիոնների խորհրդակցություններ, գիտական և տեսամեթոդական նստաշրջաններ, սեմինարներ ու քննարկումներ:

– Աշխատանքներ է տանում ֆակուլտետի շրջանավարտներին աշխատանքի տեղավորման հարցում աջակցելու և նրանց հետ կապ պահպանելու ուղղությամբ:

– Գործող նորմատիվներին համապատասխան՝ առաջարկում է ֆակուլտետի աշխատակազմի կառուցվածքը:

– Առաջարկություններ է ներկայացնում ֆակուլտետի ոչ ընտրովի պաշտոններում աշխատակիցների ընդունման և հեռացման մասին:

– Տարեկան հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդին ֆակուլտետում կատարված գիտակրթական և դաստիարակչական աշխատանքների մասին:

– Ռեկտորատի հանձնարարությամբ ֆակուլտետի գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում ինստիտուտի գիտական խորհրդին:

– Ղեկավարում է ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդը:

– Կարգադրություններ է արձակում իր լիազորությունների շրջանակում:

– Ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ գործունեությունը:

– Ապահովում է ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը:

– Ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալ(ներ)ի, ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի քարտուղարի թեկնածուներին:

3.6. Ինստիտուտի ռեկտորին սահմանված կարգով ներկայացնում է առաջարկություններ ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ:

3.7. Ֆակուլտետի դեկանի ընտրության կարգը (տես Հավելված 1):

3.8. Ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդը՝ որպես ընտրովի ներկայացուցչական մարմին, ձևավորվում է ֆակուլտետի առաջատար հաստիքային դասախոսներից, աշխատակիցներից և ուսանողներից դեկանի լիազորությունների ժամկետով:

Ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի կազմի մեջ են մտնում ֆակուլտետի դեկանը /նախագահ/, ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը /ռեկտորի ներկայացմամբ/, դեկանի տեղակալ(ներ)ը /դեկանի ներկայացմամբ/, ֆակուլտետային ամբիոնների վարիչները, ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները, ինչպես նաև ֆակուլտետային ամբիոնների մեկական աշխատակից:

Ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով:

Ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի որոշումները հաստատվում են և իրավասու են, եթե նրան մասնակցում է ցուցակային կազմի 2/3-ից ոչ պակասը:

Ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկում նիստին ներկաների 50%-ից ավելին:

3.8.1. Ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդը՝

– ինստիտուտի ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ (լաբորատորիաներ, բաժիններ) և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու վերաբերյալ առաջարկություններ:

– Լուծում է ֆակուլտետի ուսումնական, միջազգային գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ հարցեր:

– Ինստիտուտի գիտական խորհրդում հաստատելու համար ինստիտուտի ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլաններն ու ծրագրերը:

– Ընտրում է ինստիտուտի կառավարման մարմիններում ֆակուլտետի ներկայացուցիչներին:

– Լուծում է սույն կանոնակարգից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

– Զբաղվում է ֆակուլտետի գործունեությանն առնչվող այն հիմնահարցերով, որոնք չեն վերաբերում ինստիտուտի գիտական խորհրդի իրավասություններին:

– Քննարկում, որոշումներ է ընդունում և գիտական խորհրդին ներկայացնում տարբեր մասնագիտացումների ստեղծման և լուծարման մասին:

– Քննարկում է ամբիոնների հաշվետվությունները նրանց ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին:

– Քննարկում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների և մասնագիտական որակավորման բարձրացման պլանները:

– Ամփոփում է ֆակուլտետի ուսանողների ուսումնական, կրթական և արտադրական պրակտիկաների արդյունքները:

– Քննարկում է ֆակուլտետում իրականացված ուսումնամեթոդական, գիտական և արտադրական պրակտիկայի մասին դեկանի հաշվետվությունը:

– Սահմանում է դեկանի, ինստիտուտի խորհրդի և գիտական խորհրդի անդամների ընտրության համար կազմավորվող ֆակուլտետի խորհրդի ձևավորման արարողակարգը:

– Սահմանված կարգով առաջարկություն է ներկայացնում դասախոսական և տարբեր պաշտոնների թափուր տեղերի համար և ամբիոնի հետ ինստիտուտի գիտական խորհրդին երաշխավորում մրցույթին դիմած թեկնածուների (ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի վարիչ) համար:

– Առաջադրում է դեկանի վաղաժամկետ վերընտրության հարցով խորհրդի հրավիրման հարցը դասախոսների հաստիքացուցակի պարզ մեծամասնության քվեների հիման վրա: Նման որոշման ընդունման դեպքում խորհուրդը պարտավոր է երկամսյա ժամկետում կազմակերպել դեկանի վերընտրություններ:

– Հաստատում է ուսուցման անհատական պլանի անցած ուսանողների պարապմունքների ծրագրերը:

– Ֆակուլտետի խորհրդում ինստիտուտի խորհրդի և գիտական խորհրդի կողմից տրված քվոտայի սահմաններում նրանց համար քվեարկությամբ առաջադրում է անդամության թեկնածություններ:

– Քննարկում է ամբիոնների հաշվետվությունները մասնագետների պատրաստման աշխատանքների արդյունավետության բարձրացման և ֆակուլտետի շրջանավարտների հետ կապերի ամրապնդման վերաբերյալ:

– Քննարկում է ֆակուլտետի ավարտական ատեստացիաների արդյունքները:

– Ընդունում և ինստիտուտի խորհրդին առաջարկություններ է ներկայացնում սույն կանոնակարգի փոփոխությունների վերաբերյալ:

– Քննարկում և գիտխորհրդի հաստատմանն է ներկայացնում անվանական կրթաթոշակների, պարգևատրումների, պատվավոր կոչումներ շնորհելու, երախտավորին նվիրված անկյուններ ստեղծելու, ստորաբաժանումներ, կաբինետներ անվանակոչելու և այլ հարցեր:

– Քննարկում է իր իրավասությունների մեջ մտնող և ֆակուլտետի գործունեությանը վերաբերող այլ հիմնահարցեր:

– Ընդունված կարգով անցկացնում է տվյալ ֆակուլտետում առնվազն 0,75% բեռնվածություն ունեցող դասախոսների և ասիստենտների ընտրությունները:

3.9. Ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի որոշումները համարվում են իրավասու, եթե նիստին մասնակցում է նրա անդամների առնվազն 2/3-ը: Ֆակուլտետի ուսումնական և գիտական բոլոր հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

3.10. Դեկանի տեղակալը նշանակվում է ռեկտորի հրամանով՝ ֆակուլտետի դեկանի առաջարկությամբ: Դեկանի տեղակալն իրականացնում է ֆակուլտետի գործունեության որոշակի ոլորտի անմիջական ղեկավարությունը՝ դեկանի հանձնարարություններին և կարգադրություններին համապատասխան:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ: ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

4.1. Ֆակուլտետում ընդունելությունն իրականացվում է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված Ընդունելության կանոնների համաձայն՝ ելնելով ինստիտուտի կանոնադրության պահանջներից:

4.2. Ֆակուլտետի մասնագիտությունների գծով պետպատվերով ուսուցման ընդունելության կառուցվածքն ու ծավալը սահմանվում է ինստիտուտի ռեկտորի և գիտական խորհրդի կողմից՝ հիմնվելով ՀՀ ԿԳՆ հաստատած պետպատվերի թվաքանակի վրա: Պայմանագրային /արտաբյուջետային/ ուսուցման համար ընդունելությունը կատարվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

4.3. Ֆակուլտետում ուսուցման գործընթացը կազմակերպվում է ինստիտուտի կանոնադրության և ֆակուլտետի կանոնակարգի պահանջներին համապատասխան:

4.4. Ֆակուլտետը կրթությունը կարող է իրականացնել առկա, հեռակա, հեռավար, ինչպես նաև դրսեկության ձևերով:

4.5. Կրթության յուրաքանչյուր ձևում թույլատրվում է ուսուցումն իրականացնել նաև անհատական պլաններով, որոնք հաստատվում են ֆակուլտետի, ապա՝ ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:

4.6. Ֆակուլտետը մասնակցում է համապատասխան մասնագիտությունների գծով ասպիրանտների և հայցորդների ուսուցման գործընթացին:

4.7. Ֆակուլտետում ուսուցումն իրագործվում է հայերեն լեզվով (բացառությամբ “Ռուսաց լեզու և գրականություն”, “Օտար լեզու” մասնագիտությունների մասնագիտական առարկաների):

5. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ
ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

5.1. Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքները սահմանվում են՝ գործող նորմատիվների համաձայն: Ֆակուլտետի ղեկանը յուրաքանչյուր տարի մշակում և ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դասախոսների հաստիքացուցակը:

5.2. Ֆակուլտետի կրթաօժանդակ անձնակազմի և մյուս աշխատակիցների հաստիքները սահմանվում են՝ գործող նորմատիվների համաձայն, և հաստատվում են ռեկտորի հրամանով:

5.3. Հիմնարար ուսուցումը, որպես կանոն, պետք է իրականացվի պրոֆեսորների ու դոցենտների, ավագ դասախոսների կողմից: Դասախոսներին և ասիստենտներին դասախոսություններ վարել թույլատրվում է գործող կանոնակարգի և ինստիտուտի գիտխորհրդի որոշման հիման վրա:

5.4. Ֆակուլտետի դասախոսներն ու աշխատակիցներն իրավունք ունեն՝

– սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու ինստիտուտի և ֆակուլտետի կառավարման մարմիններում,

– մասնակցելու ինստիտուտի և ֆակուլտետի գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանն ու որոշումների ընդունմանը, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների և կառավարման օրգանների միջոցով,

– սահմանված կարգով օգտվելու ինստիտուտի լաբորատորիաների, կաբինետների, լսարանների, ընթերցասրահների, գրադարանների, տեղեկատվական ֆոնդերի ծառայություններից,

– մշակելու և առաջարկություններ ներկայացնելու կրթական, գիտամանկավարժական և դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ,

– մասնակցելու գիտամեթոդական խորհուրդների ու հանձնաժողովների աշխատանքներին,

– ինստիտուտի գիտական խորհրդում բողոքարկելու ռեկտորի, իսկ ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդում՝ դեկանի այն հրամաններն ու կարգադրությունները, որոնք սահմանափակում են ինստիտուտի դասախոսների ու աշխատակիցների՝ ինստիտուտի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով ամրագրված իրավունքները,

– ընտրելու կրթության, ինչպես նաև գիտական հետազոտությունների իրականացման այնպիսի ձևեր ու եղանակներ, որոնք հիմնավորապես են ապահովում կրթական ու գիտական գործընթացների բարձր որակը:

5.5. Ֆակուլտետի անդամներն ունեն նաև այլ իրավունքներ, որոնք ամրագրված են ՀՀ գործող օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրով, ինստիտուտի կանոնադրությամբ և ներքին կանոնակարգի կանոններով:

5.6. Ֆակուլտետի աշխատակիցներն առանց իրենց համաձայնության չեն կարող ընդգրկվել իրենց ծառայողական պարտականությունների հետ չառնչվող աշխատանքներում՝ բացի պայմանագրով նախատեսված վերադաս մարմնի օրինական հանձնարարություններից:

5.7. Ֆակուլտետի աշխատակիցներն իրենց աշխատանքային (մասնավորապես՝ գիտական, կրթական, դաստիարակչական, մեթոդական) նվաճումների համար կարող են խրախուսվել:

5.8. Ֆակուլտետի դասախոսներն ու աշխատակիցները պարտավոր են՝

– իրենց աշխատանքային գործունեությունը ծավալել մասնագիտական բարձր մակարդակով,

– կատարել իրենց՝ պայմանագրով հաստատված ծառայողական պարտականությունները,

– ակտիվորեն մասնակցել ամբիոն(ներ)ի կողմից ընտրված թեմայով գիտական աշխատանքներին,

– դաստիարակչական աշխատանք ծավալել ուսանողության հետ,

– բարձրացնել իրենց գիտատեսական, մանկավարժական և հոգևոր մակարդակը,

– դեկանի հանձնարարությամբ լուսավորչական աշխատանքներ իրականացնել բնակչության շրջանում,

– ռեկտորի հրամանով և դեկանի հանձնարարությամբ մասնակցել փորձագիտական հանձնաժողովների աշխատանքներին,

– պահպանել ինստիտուտի ներքին կարգուկանոնը, ժամանակին կատարել ռեկտորի հրամաններն ու դեկանի կարգադրությունները:

5.9. Ֆակուլտետի ուսանողներն իրավունք ունեն՝

– պետական կրթական ծրագրերին համապատասխան՝ ստանալու բարձրագույն կրթություն (այդ թվում՝ գործող չափանիշների սահմաններում՝ անհատական ժամանակացույցով նախատեսված),

– ձեռք բերելու այնպիսի գիտելիքներ, որոնք համապատասխանում են գիտության, տեխնիկայի և մշակույթի ժամանակակից մակարդակին,

– հաճախելու բոլոր տիպի կրթական պարապմունքներին, իսկ լրացուցիչ գիտելիքներ ստանալու ցանկության դեպքում (ինստիտուտի կրթական մասի ու դեկանատների համաձայնությամբ)՝ նաև մյուս մասնագիտացումների պարապմունքներին,

– անվճար օգտվելու ինստիտուտի և ֆակուլտետի լաբորատորիաների, կաբինետների, լսարանների, ընթերցասրահների, գրադարանի, այլ կրթադաստիարակչական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև մարզական բազաների ու կառույցների ծառայություններից,

– մասնակցելու ֆակուլտետում և ինստիտուտում կազմակերպվող գիտահետազոտական աշխատանքներին, ՈԻԳԸ կազմակերպած կոնֆերանսներին և գիտաժողովներին,

– ինստիտուտի խորհրդում, գիտական և ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդներում բողոքարկելու ռեկտորի հրամաններն ու դեկանի և այլ պաշտոնատար անձանց կարգադրությունները, որոնք սահմանափակում են իրենց՝ ինստիտուտի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով ամրագրված իրավունքները,

– իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցելու ֆակուլտետի և ինստիտուտի կառավարման մարմինների աշխատանքներին,

– մասնակցելու ֆակուլտետի և ինստիտուտի հասարակական միջոցառումներին,

– սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու ինստիտուտի և ֆակուլտետի ուսանողական խորհուրդների կազմում:

5.10. Ուսանողները պարտավոր են՝

– յուրացնել դասավանդվող գիտելիքները,

– սահմանված ժամկետներում կատարել բարձրագույն մասնագիտական կրթության՝ ուսումնական պլաններով և կրթական ծրագրերով նախատեսված բոլոր տիպի առաջադրանքները,

– անցնել կրթական ծրագրերի համաձայն նախատեսված ընթացիկ ու ամփոփիչ բոլոր ատեստացիաները /քննություններ, ստուգարքներ, ավարտական աշխատանքների պաշտպանություններ և այլն/,

– պահպանել ինստիտուտի ներքին կանոնակարգի, ինստիտուտի կանոնադրության և սույն կանոնակարգի կանոնները:

6. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6.1. Ֆակուլտետի գիտահետազոտական աշխատանքը ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների և մասնագետների պատրաստման բաղկացուցիչ մասն է կազմում:

6.2. Ֆակուլտետում գիտահետազոտական աշխատանքների իրականացման կարևորագույն խնդիրներն են՝

– հիմնարար և կիրառական հետազոտությունների կատարումը,

– մասնագետների պատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացումը,

– ակտիվ մասնակցությունը բարձրագույն կրթության զարգացման և կատարելագործման հիմնահարցերի մշակման գործում:

6.3. Ֆակուլտետում գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար հիմք են ընդունվում՝

- միջազգային, ազգային և տարածաշրջանային ծրագրերը,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց պատվերները,
- կրթական ծրագրերը և նախաձեռնողական նախագծերը /գրանտները/,
- ինստիտուտի հետ համաձայնեցված՝ ֆակուլտետի ծրագրերը և նախաձեռնողական նախագծերը:

6.4. Գիտական հետազոտությունների պլանները և դրանց կատարման մասին հաշվետվությունները քննարկվում և հաստատվում են ֆակուլտետների գիտամնամեթոդական և ինստիտուտի գիտական խորհուրդների կողմից:

7. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՒՄԸ

7.1. Ֆակուլտետում դաստիարակչական աշխատանքը կազմում է մասնագետների պատրաստման գործընթացի անքակտելի բաղադրամասը և նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, սոցիալապես ակտիվ և մասնագիտական բարձր կարողություններ ունեցող և եվրոպական միացյալ կրթական տարածքում շարժունակ մասնագետների պատրաստմանը:

7.2. Ֆակուլտետում դաստիարակչական աշխատանքի հիմնական խնդիրներն են՝

- ուսանողների ստեղծագործական, մտավոր և կազմակերպչական կարողությունների բացահայտումը,
- ուսանողների գեղագիտական և բարոյահոգեբանական դաստիարակությունը,
- առողջ կենսակերպի քարոզչությունը ուսանողության շրջանում,
- ուսանողական ինքնակառավարման զարգացումը,
- ուսանողների հանգստի կազմակերպումը, աջակցությունը սովորողների նախաձեռնություններին,
- դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը և վերահսկողությունը հանրակացարանում:

7.3. Ֆակուլտետում դաստիարակչական աշխատանքների ձևերից է կուրսղեկների ինստիտուտը: Յուրաքանչյուր կուրս (կամ խումբ) ունի իր կուրսղեկը, որն ղբաղվում է կուրսի (կամ խմբի) ուսումնական և դաստիարակչական աշխատանքներով: Կուրսղեկները հաշվետու են ֆակուլտետի դեկանին (կամ տեղակալին):

Կուրսղեկներն օժանդակում են ուսանողներին ինստիտուտի ուսումնական և արտաուսումնական աշխատանքներ իրականացնող կառույցների հետ համագործակցելու գործում, կուրսերում իրականացնում են հատուկ միջոցառումներ և նպաստում են ուսանողների ներգրավվմանը համաֆակուլտետային և համաինստիտուտային միջոցառումներին:

Ֆակուլտետում յուրաքանչյուր տարի ընդունվում է սովորողների հետ դաստիարակչական աշխատանքի ծրագիր: Ծրագիրը քննարկվում և ընդունվում է ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի նիստում, որին հրավիրվում են

Ֆակուլտետի դասախոսները, աշխատակիցները, սովորողները և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ծրագիրը հաստատվում է դեկանի կողմից:

7.4. Ուսումնական տարվա վերջում ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդում դեկանը հաշվետվություն է ներկայացնում դաստիարակչական աշխատանքների իրականացման մասին:

7.5. Ֆակուլտետը միջոցառումներ է ձեռնարկում դաստիարակչական աշխատանքների ֆինանսավորման և խթանման ուղղությամբ՝ հարցը ներկայացնելով ռեկտորատի քննարկմանը, աջակցում է ուսխորհրդի ուսանողակենտրոն գործունեության ծավալմանը:

8. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Ինստիտուտի կանոնադրության համաձայն՝ ֆակուլտետը մասնակցում է օտարերկրյա կազմակերպությունների, հիմնարկների ու ձեռնարկությունների հետ միջազգային համագործակցությանը:

8.2. Միջազգային գործունեության բնագավառում ֆակուլտետը՝

– միջպետական և միջկառավարական պայմանագրերի համաձայն, ինչպես նաև արտասահմանյան կազմակերպությունների, հասատությունների ու քաղաքացիների հետ ինստիտուտի կնքած պայմանագրերի հիման վրա իրականացնում է օրարերկրյա քաղաքացիների ուսուցումը:

– Առաջարկություններ է ներկայացնում օտարերկրյա գիտնականներին և մասնագետներին գիտական աշխատանքներ կատարելու և դասախոսություններ կարդալու նպատակով ֆակուլտետ հրավիրելու մասին:

– Ռեկտորատին առաջարկություններ է ներկայացնում ֆակուլտետի աշխատատակիցների և ուսանողների արտասահմանյան գործուղումների մասին:

– Արտասահմանյան կազմակերպությունների հետ իրականացնում է համագործակցության այլ եղանակներ, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, ինստիտուտի կանոնադրությանը:

9. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Ֆակուլտետի լուծարման կամ կազմավորման առաջարկը ինստիտուտի խորհրդին ներկայացնում է ինստիտուտի գիտխորհուրդը ռեկտորատի որոշմամբ:

9.2. Ֆակուլտետը կարող է լուծարվել կամ վերակազմավորվել ինստիտուտի խորհրդի որոշմամբ այն դեպքում, երբ՝

– դադարեցվել է տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստումը:

– Բացակայում է պահանջարկը տվյալ մասնագետների նկատմամբ:

– Ուսանողների թվաքանակը ֆակուլտետում 150-ից պակաս է:

– Դադարել է գործել տվյալ մասնագիտությամբ ինստիտուտին տրված լիցենզիան:

– Ինստիտուտի խորհուրդը որոշում է ֆակուլտետը վերակազմավորելու մասին:

– Առկա է ինստիտուտի խորհրդի որոշումը այլ ֆակուլտետի հետ միավորելու մասին:

9.3. ՀՀ օրենսդրության, ինստիտուտի կանոնադրության և սույն կանոնակարգի խախտման դեպքում ինստիտուտի խորհուրդը իրավասու է կասեցնել ֆակուլտետի գործունեությունը:

10. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆակուլտետում տարվում, կազմվում և պահպանվում են հետևյալ փաստաթղթերը՝

10.1. Ֆակուլտետին վերաբերող հրամանները, ռեկտորի և պրոռեկտորի կարգադրությունները (կրկնօրինակներ) 5 տարի:

10.2. Ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի նիստերի արձանագրությունները (մշտապես):

10.3. Ուսումնագիտական կոնֆերանսների, մեթոդափափորման նիստերի արձանագրությունները (մշտապես):

10.4. Ֆակուլտետի աշխատանքային պլանը (տարեկան, կիսամյակային) տվյալ ուսումնական տարվա համար (մշտապես):

10.5.1. Մասնագիտությունների պլանները:

10.5.2. Մասնագիտությունների աշխատանքային ուսումնական պլանները և ուսումնական գործընթացի ժամանակացույցերը (մշտապես):

10.6. Ֆակուլտետի աշխատանքների տարեկան հաշվետվությունը (մշտապես):

10.7. Ֆակուլտետի բոլոր կուրսերի (խմբերի) մատյանները (5 տարի):

10.8. Քննական տեղեկագրերը (5 տարի):

10.9. Գնահատականների մայր մատյանները (մշտապես):

10.10. Գնահատականների ամփոփիչ մատյանները (մշտապես):

10.11. Ուսանողների անձնական գործերը (75 տարի):

10.12. Դասացուցակները (1 տարի):

10.13. Ուսանողների դիմումները (1 տարի):

10.14. Ուսանողների կողմից ներկայացված փաստաթղթերը (բացակայությունների մասին) 1 տարի:

10.15. Դասախոսների զեկուցագրերը (1 տարի):

11. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններ մտցվում են ինստիտուտի խորհրդի որոշմամբ:

Հավելված 1

Ֆակուլտետի դեկանի ընտրության կարգը

1. Ֆակուլտետի դեկանի ընտրության մասին հայտարարությունը ձևակերպվում է ինստիտուտի ռեկտորի հրամանով և խորհրդի նիստից 30 օր առաջ հղվում է համապատասխան ուսումնագիտական ստորաբաժանումներին և հրապարակվում ինստիտուտում ու նրա լրատվական միջոցներում:

2. Ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածություններն առաջադրվում են՝

– այդ ֆակուլտետի պրոֆեսորներից (դոկտորներից), ինչպես նաև 10 և ավելի տարիների գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող ԲՈՀ-ի կողմից հաստատված դոցենտներից,

– ԲՈՀ-ի կողմից հաստատված դոցենտի գիտական կոչում չունեցող, բայց դոցենտի պաշտոն զբաղեցրած գիտության թեկնածուներից, որոնք ունեն տասը և ավելի տարիների գիտամանկավարժական աշխատանքի ստաժ,

– նույն ինստիտուտի այլ ֆակուլտետներում լրիվ դրույքով աշխատող և ԲՈՀ-ի կողմից հաստատված պրոֆեսորներից (դոկտորներից), ինչպես նաև 10 և ավելի տարիների գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող դոցենտներից, որոնց ուսումնական բեռնվածության 25%-ից ավելին իրականացվում է ներկա ֆակուլտետի ակադեմիական խմբերում,

– նույն պայմանների դեպքում՝ այլ բուհերից և գիտահետազոտական կազմակերպություններից այդ ֆակուլտետում վերջին տարիների ընթացքում 0,5 դրույքով համատեղող ԲՈՀ-ի կողմից հաստատված պրոֆեսորներից և դոցենտներից: Թեկնածուների տարիքը չպետք է գերազանցի կենսաթոշակառուների մասին ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետը:

3. Ֆակուլտետի ղեկանի պաշտոնի թեկնածույունները գրավոր կարգով՝ ինստիտուտի ռեկտորի անունով, կարող են առաջադրել ֆակուլտետի ուսումնագիտական ստորաբաժանումները կամ ֆակուլտետի խորհրդի և ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի առանձին անդամներ: Առաջադրումը ներկայացվում է փակ ծրարով ընդհանուր բաժնին:

4. Թեկնածույունների առաջադրումը դադարեցվում է խորհրդի նիստից 15 օր առաջ, արդյունքները ձևակերպվում և ներկայացվում են ինստիտուտի ռեկտորին:

5. Ֆակուլտետի ղեկանի պաշտոնի թեկնածուների ցուցակը, որում նշվում են թեկնածուների անունները և ազգանունները, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը, ինչպես նաև նրանց առաջադրած ուսումնագիտական ստորաբաժանումները և առանձին անձինք, ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի քարտուղարը խորհրդի նիստից 10 օր առաջ հրապարակում է ինստիտուտում և այդ մասին ծանուցում պաշտոնի թեկնածուներին:

6. Ֆակուլտետի ղեկանի պաշտոնի թեկնածույունների քննարկման և ղեկանի ընտրության օրակարգով խորհրդի նիստը վարում է (նախագահում է) ինստիտուտի ռեկտորը կամ ուսումնական գծով պրոռեկտորը, իսկ ինստիտուտի մասնաճյուղում՝ մասնաճյուղի տնօրենը (նախագահողը Խորհրդի անդամ չէ): Նիստը սկսվում է, եթե ներկա են խորհրդի հաստատված կազմի ոչ պակաս 2/3-ը:

7. Հարցի քննարկումը նախագահողը սկսում է թեկնածույունների առաջադրման գործընթացի նախնական փուլի վերաբերյալ խորհրդի անդամների համահավաք կարծիքի պարզումով, իսկ չպատճառաբանված կամ կոպիտ շեղումներ ի հայտ գալու դեպքում իրավասու է հարցը հանել քննարկումից մինչև ինստիտուտի ռեկտորատի կողմից հատուկ որոշում կայացնելը:

8. Նախագահողը, ըստ թեկնածույունների առաջադրման հերթականության, ներկայացնում է թեկնածուների ցուցակը և նշում առաջադրող ստորաբաժանումներն ու անձանց:

9. Թեկնածուների ներկայությունը խորհրդի նիստին պարտադիր է:

10. Թեկնածուների ցուցակի ներկայացումից հետո նախագահողի առաջարկով սկսվում է մտքերի փոխանակություն և կարծիքների արտահայտում, որն ընթանում է ըստ թեկնածույունների առաջադրման հերթականության:

11. Մտքերի փոխանակության և կարծիքների արտահայտման ելույթների համար տրվող ժամանակը որոշում է խորհուրդը նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

12. Մտքերի փոխանակությունը և կարծիքների արտահայտումը դադարեցվում է նախագահողի առաջարկությամբ և խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ որոշում կայացնելով:

13. Նախագահողը հայեցակարգը ներկայացնելու համար, ըստ թեկնածությունների առաջադրման հերթականության, ձայնը տալիս է դեկանի պաշտոնի թեկնածուներին: Վերջիններիս էլույթի համար տրվող ժամանակի վերաբերյալ խորհուրդը ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ ընդունում է որոշում:

14. Յուրաքանչյուր թեկնածուի էլույթից հետո նախագահողը խորհրդի անդամներին առաջարկում է տալ հարցեր: Տրվող հարցերի սահմանափակման առաջարկը կատարում է նախագահողը, և որոշումն ընդունվում է խորհրդին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

15. Ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուին փակ (գաղտնի) քվեարկության թողնելու կամ նրա բացարկի մասին որոշումն ընդունվում է յուրաքանչյուր թեկնածուի հարցի քննարկումից հետո խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

16. Թեկնածուն կարող է հայտարարել ինքնաբացարկ մինչև խորհրդի որոշմամբ նրան փակ (գաղտնի) քվեարկության թողնելու պահը:

17. Նախագահողն ամփոփում է քննարկումների արդյունքները և խորհրդի անդամներին ներկայացնում փակ (գաղտնի) քվեարկության կարգը:

18. Նախագահողի առաջարկով փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար խորհուրդը բաց քվեարկությամբ իր կազմից ընտրում է 3 հոգուց ոչ պակաս հաշվիչ հանձնախումբ, որի կազմում բացառվում է այն անձանց ընդգրկումը, որոնց թեկնածություններն առաջադրված են:

19. Ընտրական հանձնախումբն իր կազմից ընտրում է հանձնախմբի նախագահ, հանձնախմբի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

20. Բացարկ չստացած թեկնածությունները մտցվում են քվեաթերթիկի մեջ: Միակ թեկնածության քվեարկության դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է լինեն “Կողմ եմ” և “Դեմ եմ” արտահայտությունները (հավելված 1.1.):

21. Մեկից ավելի թեկնածությունների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը (հավելված 1.2.):

22. Ընտրական հանձնախմբի անդամները նախօրոք ստորագրում են բոլոր քվեաթերթիկների հակառակ երեսին, ապա խորհրդի յուրաքանչյուր անդամին առաջարկվում է ստորագրել խորհրդի անդամացուցակում, վերցնել մեկ քվեաթերթիկ և քվեախցիկում քվեաթերթիկի վրա համապատասխան նշումը կատարելով՝ քվեաթերթիկը երկծալ նետել քվեատուփի մեջ:

23. Միակ թեկնածուի քվեարկության դեպքում քվեաթերթիկում թողնվում է “Կողմ եմ” կամ “Դեմ եմ” արտահայտությունը:

24. Մեկից ավելի թեկնածուների դեպքում քվեաթերթիկում թողնվում է միայն մեկ թեկնածուի անուն ազգանունը, որի օգտին խորհրդի անդամը քվեարկում է՝ ջնջելով մյուս թեկնածուների ազգանուններն ու անունները, որոնց դեմ է քվեարկում: Բոլոր թեկնածություններին դեմ քվեարկելու դեպքում խորհրդի անդամը քվեաթերթիկում ջնջում է բոլոր թեկնածուների ազգանուններն ու անունները:

25. Քվեարկությունն ավարտվելուց հետո ընտրական հանձնախումբն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (հավելված 1.3.): Մեկից ավելի թեկնածությունների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է՝ ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:

Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝

– թողնված կամ ջնջված են թե՛ «Կողմ եմ» և թե՛ «Դեմ եմ» արտահայտությունները (միակ թեկնածուի քվեարկության դեպքում),

– թողնված են երկու և ավելի թեկնածություններ (մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում),

– կատարված են չնախատեսված նշումներ, ընդգծումներ և այլ նշաններ:

Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է ընտրական հանձնախումբը՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

26. Ընտրական հանձնախմբի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո ընտրական հանձնախմբի արձանագրությունը հաստատվում է խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

27. Միակ թեկնածության դեպքում թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է խորհրդի ներկա անդամների կեսից ավելին:

28. Մեկից ավելի թեկնածությունների դեպքում՝

ա) ընտրված է համարվում խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնություն հավաքած թեկնածուն,

բ) թեկնածուների կողմից խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնություն չհավաքելու դեպքում խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են.

– առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները,

– առավելագույն ձայն ստացած 1-ին թեկնածուն և նույնաքանակ ձայներ ստացած 2-րդ ու հաջորդ թեկնածուները կամ

– առավելագույն և նույնաթիվ ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:

29. Կրկնակի քվեարկության դեպքում ընտրված է համարվում ավելի շատ (բայց ոչ խորհրդի անդամների ընդհանուր թվի 50%-ից պակաս) ձայներ հավաքած թեկնածուն: Հավասար ձայների դեպքում քվեարկությունը կրկնվում է:

30. Ֆակուլտետի խորհուրդը բուհի ռեկտորին ներկայացնում է առաջարկություն ընտրված ղեկանի պաշտոնավարման մասին, որի համաձայն՝ ինստիտուտի ռեկտորը ֆակուլտետի ղեկանի պաշտոնում ընտրված թեկնածուի հետ 5 տարի ժամկետով կնքում է աշխատանքային պայմանագիր և հրամանագրում ղեկանի պաշտոնում:

31. Ֆակուլտետի խորհրդի՝ նոր ղեկանի ընտրության վերաբերյալ ընդունած որոշման հետ ինստիտուտի ռեկտորի անհամաձայնության դեպքում ռեկտորը գրավոր, պատճառաբանված հիմնավորում է իր որոշումը և 5-օրյա ժամկետում ինստիտուտի գիտական խորհրդում կազմակերպում կրկնակի ընտրություն:

32. Թեկնածուների կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է վերը սահմանված ընթացակարգով: Ընտրված է համարվում՝

– կ. 28-ով իրականացվող կրկնակի քվեարկության դեպքում՝ առավելագույն ձայներ ստացած 1-ին թեկնածուն,

– կ. 31-ով իրականացվող կրկնակի քվեարկության դեպքում՝ խորհրդի (ինստիտուտի գիտական խորհրդի) ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունն ստացած թեկնածուն:

33. Ֆակուլտետի ղեկանի պաշտոնի միակ թեկնածուի կողմից խորհրդի (ինստիտուտի գիտական խորհրդի) ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունն չստանալու, ինչպես նաև կրկնակի քվեարկության արդյունքով առավելագույն, բայց հավասար ձայներ ստացած երկու և ավելի թեկնածությունների առկայության դեպքում ֆակուլտետի ղեկանի ընտրությունը համարվում է չկայացած:

34. Նոր ֆակուլտետում խորհրդի բացակայության կամ ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի փոքրաթիվ լինելու (մինչև 25 հաստիք) կամ էլ այլ առանձնահատուկ դեպքերում ինստիտուտի ռեկտորն իրավասու է ֆակուլտետի ղեկանի ընտրությունը կազմակերպել ինստիտուտի գիտական խորհրդում:

35. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ֆակուլտետ, ֆակուլտետում ղեկանի պաշտոնի թեկնածության բացակայություն, կրկնակի քվեարկության բացասական արդյունք և այլն) ինստիտուտի ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով ֆակուլտետի ղեկանի պաշտոնում հրամանագրել կանոնակարգի մեջ նշված որակական պահանջները բավարարող՝ տվյալ կամ այլ բուհի մասնագետի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել ֆակուլտետի ղեկանի ընտրության նոր գործընթաց:

36. Դեկանը կարող է ազատվել աշխատանքից ՀՀ օրենսդրությամբ և ինստիտուտի կանոնադրությամբ նախատեսված հիմունքներով՝

– իր դիմումի համաձայն, որը հաստատվում է ռեկտորի հրամանով,

– ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո,

– ֆակուլտետի խորհրդի կամ ինստիտուտի գիտական խորհրդի նիստի որոշմամբ, որը հաստատվում է ռեկտորի հրամանով,

– մահվան պատճառով:

37. Չբաղեցրած պաշտոնից ղեկանի ազատման արարողակարգը սահմանվում է ղեկանի ընտրության կարգով:

38. Ռեկտորը ֆակուլտետի ղեկանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում նույն ֆակուլտետի կազմից նշանակում է ղեկանի պաշտոնակատար և հրաման արձակում ֆակուլտետի խորհուրդ ձևավորելու մասին: Ֆակուլտետի խորհրդի կազմը ռեկտորի հրամանագրմանն է ներկայացնում ղեկանի պաշտոնակատարը:

39. Ֆակուլտետի ղեկանը, յուրաքանչյուր տարի ինստիտուտի ռեկտորատով հաստատված ժամանակացույցի համաձայն, ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդում հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի ուսումնադաստիարակչական, գիտամեթոդական, հետազոտական և կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում ինստիտուտի ռեկտորն իրավասու է ֆակուլտետի ղեկանի հաշվետվությունը և դրա քննարկումը տեղափոխել ինստիտուտի գիտական խորհուրդ:

40. Պայմանագրով նախատեսված աշխատանքները որակով, նշված ծավալներով և ժամկետներում կատարելու դեպքում ինստիտուտի ռեկտորին իրավունք է վերապահվում, օրենքով սահմանված կարգով և հիմք ընդունելով ֆակուլտետի խորհրդի (ինստիտուտի գիտխորհրդի) դրական կարծիքը, ֆակուլտետի

դեկանի հետ մինչև հնգամյա ժամկետի ավարտը կնքել երկրորդ հնգամյա ժամկետով պայմանագիրը:

41. Պայմանագրում նշված պաշտոնավարման ժամկետը լրանալու և նոր պայմանագիր չկնքելու, ինչպես նաև սույն կանոնակարգով հաստատագրված դեկանի պաշտոնավարման առավելագույն ժամկետը լրանալու կապակցությամբ ինստիտուտի ռեկտորը օրենքով սահմանված կարգով, պայմանագրում նշված ժամկետի ավարտից 2 ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում է ֆակուլտետի դեկանին և նշանակում ֆակուլտետի դեկանի նոր ընտրություններ՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով:

42. Պայմանագիրը կարող է դադարեցվել կամ վաղաժամկետ լուծարվել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ կամ կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ այլ պատճառներով: Պայմանագիրը դադարեցնելու կամ լուծարելու որոշման մասին կողմերը միմյանց իրազեկ են պահում 2 ամիս առաջ՝ պարզաբանելով որոշումն ընդունելու պատճառները, որից հետո ինստիտուտի ռեկտորը նշանակում է ֆակուլտետի դեկանի նոր ընտրություններ՝ սույն Կարգով սահմանված ընթացակարգով:

43. Սույն կանոնակարգով գործողությունը տարածվում է նաև ինստիտուտի՝ ֆակուլտետին համարժեք այլ ուսումնական ստորաբաժանումների (դպրոց, դեպարտամենտ, բաժանմունք) վրա:

44. Ինստիտուտում նախկինում գործող մրցութային կարգով ընտրված դեկանները մինչև մրցութով սահմանված ժամկետի ավարտը պահպանում են իրենց կարգավիճակը (բացառությամբ ՀՀ գործող Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերի):